իրականութեան մի դիմաց պարզեցան և ցրուեցան. հարկ է ինձ, Առաքել պատմչին հետ, մեր Կա-մենիցցի եղբարց մասին ասել. « Եղեն վտարան-» դեալք և տարամերժեալք յերկիր օտար և յազգ » այլասեռ և այլալեզու . . . և անդէն օր աւուր՝ » առ սակաւ սակաւ նուազին մահուամբ և կորըս-» տեամբ », Աստուած ամուր պահէ՝ այլ տեղուանք մնացեալները։ Անեցւոց մի ամբողջ մասն, քսան հազարի չափ ժողովուրդ, հաւատարիմ իրենց նախ-նեաց աւանդութեան, հայախօս և հայածէս Դօն գետոյն եզերաց վրայ կը դեգերին, մեծաւ մասամբ կեդրոնացած հայահնչիւն Նոր-Նախիջևան քաղա-քին մէջ։